Արձանագրություն N4
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան, 23.04. 2021թ.
ժամը՝ 16.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Խաչիյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Ձիլավյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դրամբյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հ. Մելիքյանը

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Կ. Խաչիյանը,

---

1. Ընդունել Ի գիտություն, որ Ընթացակարգը 29.03.2021թ. բողոքարկվել էր <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից: Բողոքը բավարարվել է և առաջարկվում է հանձնաժողովին ուսումնասիրել բողոքի վերաբերյալ կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 որոշումն ու կայացնել համապատասխան որոշում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0

2. Ուսումնասիրելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 որոշումը (այսուհետև՝ Որոշում), հանձնաժողովը որոշեց արձանագրել հետևյալը.

1) բողոքարկվել են ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժինները,

2) բողոքի պահանջը սկզբում եղել է հրավերում փոփոխություններ կատարելը 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժինների և պայմանագրի մատակարարման ժամկետի մասով:

3) ի լրումն բողոքի պահանջ է ներկայացվել նաև ընթացակարգը հայտարարել չկայացած այդ չափաբաժիններով:

4) Բողոքը բավարարվել է, պարտավորեցնելով Պատվիրատուին հրավերում կատարել փոփոխություններ որոշմամբ ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ:

5) Վերլուծություններում արձանագրված է, որ անհրաժեշտ է մեկ չափաբաժնում խմբավորված տարբեր բնութագրեր ունեցող ապրանքները առանձնացնել առանձին չափաբաժինների:

6) ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 16 և 17-րդ կետերը սահմանում են հետևյալը.

<<16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: >>

7) Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաները ներառված են Պատվիրատուի կողմից 01.03.2021թ. հաստատված և հրապարակված գնումների պլանում:

8) ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնման գործընթացը կազմակերպելու իրավական հիմքը ծագել է 01.03.2021թ-ին և ընթացակարգը հայտարարվել է 05.03.2021թ.:

Արձանագրված փաստերի ընդհանուր ամփոփման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների բնութագրերում փոփոխություններ կատարելով, առանձին-առանձին գնման առարկաների բաժանելով և նոր քանակներ սահմանելով, դրանք կհանդիսանան նոր գնման առարկաներ, որոնք ներառված չեն Պատվիրատուի գնումների պլանում, ուստի դրանք չեն կարող ներառված լինել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, քանի որ բացակայում է դրա իրավական հիմքը: Հաշվի առնելով նաև այն, որ բողոքի պահանջ է եղել այդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը և բողոքը բավարարվել է, ուստի հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժիններով հայտարարել չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, դրանով իսկ ապահովելով Որոշման պահանջը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգը մյուս չափաբաժինների մասով ենթակա է շարունակման, հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստ հրավիրել 28.04.2021թ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին, ապահովել սույն տեղեկությունների տրամադրումը ընթացակարգի բոլոր մասնակիցներին (եթե այդպիսիք առկա են)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.		
Նախագահ՝		Կ. Խաչիյան
Անդամներ՝		Տ. Ձիլավյան
		Հ. Մելիքյան
Քարտուղար՝		Կ. Դրամբյան